

**«ՔԵՆԴԼ». գիտնականները պնդում են, որ նոր արագացուցիչ նախագիծը Հայաստանի զարգացման խթան կհանդիսանա**



Հայաստանում իրականացվող «ՔԵՆԴԼ» գիտական ծրագրի ղեկավարներն ասում են, որ այն առաջիկա տարիներին մեծ խթան կհանդիսանա տնտեսության ու գիտության զարգացման համար և կունենա ռազմավարական մեծ նշանակություն:

CANDLE (Center for the Advancement of Natural Discoveries using Light Emission, թարգմանաբար՝ սինքրոտրոնային լույսի օգտագործմամբ գիտական հետազոտությունների կենտրոն) ծրագրի շրջանակներում Հայաստանում մինչև 2017 թվականը կկառուցվեն երրորդ սերնդի երկու սինքրոտրոնային լույսի արագացուցիչներ, որոնցից առաջինի՝ AREAL լազերային գիտահետազոտական գծային արագացուցիչ կառուցումը կավարտվի 2013-ի մայիսին:

Գիտնականներն ասում են, որ այս արագացուցիչներն հնարավորություն են տալիս ուսումնասիրելու ցանկացած տեսակի նյութի կառուցվածք՝ բջջից մինչև ատոմային մակարդակը: Արագացուցիչների շնորհիվ հնարավոր է ժամանակակից գիտական հետազոտություններ կատարել հիմնարար և կիրառական ուսումնասիրությունների ողջ տիրույթում՝ ֆիզիայի, քիմիայի, կենսաբանության, բժշկության, շրջակա միջավայրի, նյութագիտության, դեղագործության, նանոէլեկտրոնիկայի և միկրոարտադրության բնագավառներում: Էլեկտրոնիկայի, քիմիայի, դեղագործության բնագավառների աշխարհի բոլոր խոշոր ընկերություններն իրենց մշակումներն իրականացնում են սինքրոտրոնային լույսի օգտագործմամբ: Նման արագացուցիչներ ունեն միայն աշխարհի զարգացած երկրները՝ ԱՄՆ-ը, Ճապոնիան, Կանադան, Անգլիան: Տարածաշրջանում, ինչպես նաև Միջին Արևելքում Հայաստանն առայժմ միակն է, որ նման արագացուցիչ կունենա:

Ծրագրի կառավարումն իրականացնում է Գիտության պետական կոմիտեն: Կոմիտեի նախագահ, ֆիզիկոս Սամվել Հարությունյանը ուրբաթ լրագրողների հետ հանդիպմանը ասաց, որ ծրագիրն ընդհանուր առմամբ կարժենա 60 միլիոն եվրո, որի 25 տոկոսը տրամադրում է Հայաստանի կառավարությունը: Ֆինանսավորման մյուս մասը տրամադրում են ծրագրի միջազգային գործընկերները՝ Ֆրանսիայի, Շվեյցարիայի, Գերմանիայի, Ռուսաստանի, Իտալիայի, Չինաստանի համանման միջազգային գիտական կենտրոնները:

«ՔԵՆԴԼ» նախագծի ղեկավար Վասիլի Ցականովն էլ ասաց, որ մայիսին շահագործվելիք AREAL-ը կարևոր գիտական և կիրառական նշանակություն կունենա ֆիզիկայի, կենսաբանության, քիմիայի և նյութագիտության բնագավառների առաջատար փորձարարական հետազոտությունների համար: Ցականովը այս սարքի կառուցումը կարևորում է երկրորդ՝ «ՔԵՆԴԼ» հիմնական արագացուցչի կառուցման համատեքստում:

«Այս արագացուցչի կառուցմամբ Հայաստանում կստեղծվի էլեկտրոնային արագացուցիչների և դրանց կիրառման ժամանակակից գիտահետազոտական փորձարարական լաբորատորիա, միջազգային մակարդակով մասնագետներ կպատրաստվեն Հայաստանում, կձևավորվի «ՔԵՆԴԼ» հիմնական արագացուցչի կառուցմանը պատրաստ գիտնականների և ինժեներների անձնակազմ, կփորձարկվեն «ՔԵՆԴԼ» հիմնական արագացուցչի հիմնական համակարգերի տեխնիկական լուծումները, կգարգանա միջազգային համագործակցությունը»,- ասաց Ցականովը:

Գիտնականներն ասացին, որ «ՔԵՆԴԼ» հիմնական արագացուցիչը հավանաբար կտեղադրվի Երևանի մերձակա Աբովյան քաղաքում: Իսկ «ՔԵՆԴԼ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտը Երևանի Ավան վարչական շրջանում է:

Հարությունյանը թեև խուսափեց նշելուց, թե «ՔԵՆԴԼ»-ը ստույգ որքան օգուտ կբերի Հայաստանի տնտեսությանը, սակայն ասաց, որ որոշ ոլորտներ «թռիչքաձև զարգացում» կունենան, բացի այդ, Հայաստանում կվերականգնվի գիտության վարկանիշը:

**Միրանույշ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

**«ԱրմենիաՆաուի» թղթակից**

## CANDLE օղակաձև արագացուցիչի շինարարությունը Հայաստանում կմեկնարկի 2013թ.-ի վերջին



Համանուն ծրագրի շրջանակներում՝ CANDLE օղակաձև արագացուցիչի շինարարությունը Հայաստանում կմեկնարկի 2013թ.-ի վերջին, ուրբաթ ասուլիսի ժամանակ ասաց ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը:

«ՔԵՆԴԼ»-ը (CANDLE-Center for the Advancement of Natural Discoveries using Light Emission) Հայաստանում 3 ԳԷՎ էներգիայով 3-րդ սերնդի սինքրոտրոնային լույսի աղբյուրի նախագիծ է, որը հնարավորություն կստեղծի ժամանակակից հիմնարար և կիրառական հետազոտություններ կատարել կյանքի գիտությունների, նյութագիտության և շրջակա միջավայրի ուսումնասիրության բնագավառներում:

«Եթե աշխատանքները հաջող ընթանան, ապա 2013թ.-ի վերջին կսկսվի արագացուցիչի շինարարությունը, իսկ 2016թ.-ի վերջին այն շահագործման կհանձնվի», - ասաց Հարությունյանը:

Օղակաձև արագացուցիչի շինարարությունը CANDLE-ի ծրագրի երկրորդ փուլն է: Առաջին փուլի շրջանակներում նախատեսված է AREAL գծային արագացուցիչի շինարարությունը, որը կավարտվի 2013թ.-ի մայիսին, երբ արագացուցիչը շահագործման կհանձնեն:

«Նախագծի առաջին փուլի համար, այսինքն AREAL արագացուցիչի շինարարության համար նախատեսված սարքավորման մեծ մասը մեզ հատկացվել է անհատույց կերպով արտասահմանցի գործընկերների կողմից, և մենք հուսով ենք, որ օղակաձև արագացուցիչի շինարարության երկրորդ փուլն իրականացնելիս՝ մեր արտասահմանցի գործընկերները կրկին մեզ կաջակցեն», - նշեց Հարությունյանը:

Կոմիտեի ղեկավարը տեղեկացրեց նաև, որ օղակաձև արագացուցիչի գործարկումը հզոր ազդակ կհաղորդի Հայաստանի տարբեր մարզերի զարգացմանը և թույլ կտա հանրապետությանն ամրապնդել իր դիրքերը համաշխարհային գիտության ոլորտում:

CANDLE նախագծի ղեկավար Վասիլի Ցականովն իր հերթին տեղեկացրեց, որ CANDLE արագացուցիչը, որը հաշվարկված է 3 գիգաէլեկտրոնվոլտ (ԳԷՎ) էներգիայի համար, ենթադրվում է, որ կկառուցվի Աբովյան քաղաքից ոչ հեռու:

Ըստ նրա, օղակաձև արագացուցիչը թույլ կտա սպասարկել գիտնականներին 3 հազար կմ շառավիղով:

Ցականովը նշեց նաև, որ խորհրդակցություններ անցկացնելու նպատակով Հայաստան են այցելել մի շարք մասնագետներ արտերկրից, իսկ հայ գիտնակաները համապատասխան վերապատրաստում են անցել:

Մինքրոտրոնային լույսի աղբյուրը (ՄԼԱ) արագացուցչի առանձին տեսակի վրա հիմնված համալիր է, որն առանձնահատուկ հատկանիշներ ունեցող լուսային փնջեր է արձակում (բարձր պայծառության, ուլտրամանուշակագույնից մինչև ռենտգենյան տիրույթի, ուղղորդման հնարավորություններով և այլն), որոնք թույլ են տալիս ուսումնասիրել ցանկացած տեսակի նյութի կառուցվածքը՝ բջջից մինչև ատոմային մակարդակ:

Աշխարհում մոտ 50 տարբեր սերնդի ՄԼԱ-ներ են գործում, որոնցից ժամանակակիցները տեղակայված են 13 զարգացած երկրներում (ԱՄՆ, Ճապոնիա, Գերմանիա, Շվեյցարիա և այլն):

## «ՔԵՆԴԼ»-ը միջազգային մակարդակի է. Վասիլի Ցականով



«Մա հաջող ընթացքով մեզա ծրագիր է, այն թռիչքաձև գարգացում կունենա: Մասնագետների լուրջ խումբ ունենք, որոնք պատրաստ են աշխատել ծրագրի վրա», - այսօր լրագրողների հետ հանդիպման ժամանակ «ՔԵՆԴԼ» նախագծի ընթացքը. ներկան եւ գարգացման հեռանկարները ներկայացրեց ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի նախագահ, ֆիզմաթ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամվել Հարությունյանը:

Ինչպես նա տեղեկացրեց՝ 2008թ. դեկտեմբերի 4-ին ընդունվեց «Հայաստանում «ՔԵՆԴԼ» 3 գել էներգիայով 3-րդ սերնդի սինքրոտրոնային լույսի աղբյուր ստեղծելու մասին» ՀՀ կառավարության որոշումը, որով «ՔԵՆԴԼ»-ին տրվեց գիտության եւ առաջատար տեխնոլոգիաների ոլորտում ռազմավարական ազգային գերակայության կարգավիճակ:

Պրոֆեսորը նշեց, որ նախագծի վերաբերյալ պաշտոնական բանակցություններ են վարվել Ֆրանսիայի էներգետիկայի դեպարտամենտի հետ, Չինաստանի Շանհայի կիրառական ֆիզիկայի ինստիտուտի հետ եւ այլոց հետ:

«ՔԵՆԴԼ» նախագծի ղեկավար, ֆիզմաթ. գիտությունների դոկտոր Վասիլի Ցականովի խոսքով՝ ծրագիրը մշակվել է 10 տարի եւ աշխարհում մեծ կիրառություն ունի. «Ծրագիրը միջազգային մակարդակի է, որը օժանդակություն է ստացել աշխարհի տարբեր լաբորատորիաներից: Այն հնարավորություն կտա գիտնականներին անել հետազոտություններ կիրառական ոլորտում»:

«ՔԵՆԴԼ» ծրագիրն իրենից ներկայացնում է 3-րդ սերնդի արագացուցչային-կուտակիչ համալիրի վրա հիմնված լուսային ճառագայթման աղբյուր: Համալիրն ուլտրամանուշակագույնից մինչեւ ռենտգենային ալիքի երկարության լայն տիրույթում հզոր, ունիկալ լուսային հոսքի մոտ 40 կայանի հնարավորություն կունենա, որոնք հնարավորություն կտան ուսումնասիրել ցանկացած տեսակի նյութի կառուցվածք՝ բջջից մինչեւ ատոմային մակարդակը:

«ՔԵՆԴԼ» սինքրոտրոնային լույսի աղբյուր ստեղծելու ծրագիրը ռազմավարական մեծ նշանակություն ունի: Ունենալով արագացուցիչ՝ Հայաստանը տարածաշրջանում կդառնա գիտության ոլորտում առաջատար երկիր, կապահովի իր ծանրակշիռ տեղը եւ ամուր հիմքերի վրա կդնի գիտատեխնիկական համագործակցությունը գարգացած երկրների հետ:

## «ՔԵՆԴԼ» գիտական նախագծի ընդհանուր ծախսը կկազմի 60 միլիոն եվրո

«ՔԵՆԴԼ» նախագծի նպատակն է Հայաստանում ստեղծել գիտական կենտրոններ, որտեղ գիտնականներն ինտենսիվ լուսային հոսքի օգնությամբ հնարավորություն կունենան հետազոտել մոլեկուլներ, կենսաբանական օբյեկտներ եւ նյութեր:

Հ կառավարության կողմից 2008 թվականին ընդունված որոշման համաձայն՝ Հայաստանում ստեղծվում է «ՔԵՆԴԼ» միջազգային գիտական հետազոտությունների կենտրոնը:

«ՔԵՆԴԼ» նախագիծը 3-րդ սերնդի արագացուցչային կուտակիչ համալիրի վրա հիմնված ճառագայթման աղբյուր է, որը հնարավորություն կտա ուսումնասիրել ցանկացած տեսակի նյութի կառուցվածք՝ բջջից մինչև ատոմ: Նախագծի առաջին փուլը AREAL լազերային գիտահետազոտական գծային արագացուցչի կառուցումն է, որը ավարտին կհասցվի 2013-ի մայիսին:

Ծրագիրը միջազգային է, 2010-2012 թվականների ընթացքում նախագծի վերաբերյալ պաշտոնական բանակցություններ են կայացել Ֆրանսիայի, Գերմանիայի, Շվեյցարիայի, Իտալիայի, Ռուսաստանի եւ Չինաստանի խոշորագույն արագացուցչային կենտրոնների հետ:

«ՔԵՆԴԼ» ծրագրի երկրորդ փուլում կստեղծվի եւս մեկ, ավելի մեծ, օդակաձեւ արագացուցիչ: Այս աշխատանքները, ըստ նախագծի, կավարտվեն 2017 թվականին:

Ծրագրի ղեկավարներն ասում են, որ գրեթե ավարտվել են AREAL գծային արագացուցչի համար անհրաժեշտ ենթակառուցվածքի պատրաստման աշխատանքները, գործարկվել բարձր հաճախականության, վակուումային, վերահսկման եւ ղեկավարման համակարգերի հիմնական փորձարարական ստենդները, նոր սարքավորումներ են ներկրվել համագործակցող երկրներից:

«ՔԵՆԴԼ» նախագծի ղեկավար, ֆիզմաթ գիտությունների դոկտոր Վասիլի Ցականովը այսօր նշեց, որ AREAL գծային արագացուցիչը կարելուք գիտական եւ կիրառական նշանակություն կունենա ֆիզիկայի, կենսաբանության, քիմիայի եւ նյութագիտության բնագավառների առաջատար փորձարարական հետազոտությունների համար:

««ՔԵՆԴԼ-ը» միջազգային մակարդակի ծրագիր է եւ հնարավորություն կտա գիտնականաններին անել ամենաառաջատար հետազոտությունները կիրառական եւ հիմնարար գիտություններում», - նշեց Ցականովը:

Նախագծի ընդհանուր ծախսը կկազմի մոտավորապես 60 միլիոն եվրո: Այդ գումարի 25 տոկոսը կտրամադրի ՀՀ կառավարությունը: Իսկ 75 տոկոսը կտրամադրվի տարբեր համագործակցող երկրների կողմից, ընդ որում ոչ միայն ֆինանսական, այլ նաեւ ըստ ցանկության՝ սարքավորումների տեսքով:

## AREAL արագացուցիչը կշահագործվի 2013 թ. մայիսին. Սամվել Հարությունյան



AREAL գծային արագացուցիչը (Advanced Research Electron Accelerator Laboratory) շահագործման կհանձնվի 2013 թ. մայիսին: Այդ մասին այսօր՝ նոյեմբերի 30-ին լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասաց ՀՀ կրթության եւ գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը:

AREAL-ը «Քենդլ» ծրագրի առաջին փուլն է (CANDLE-Center for Advancement of Natural Discoveries using Light Emission, թարգմանաբար՝ սինքրոտրոնային լույսի օգտագործմամբ գիտական հետազոտությունների կենտրոն): Երկրորդ փուլում կկառուցվի ավելի հզոր՝ օղակաձև արագացուցիչը: AREAL-ը տեղակայվելու է Երեւանում, Աղի հանքի մերձակայքում, իսկ օղակաձև արագացուցիչը՝ Աբովյանի մոտ (Աբովյան-Մայակովսկի խաչմերուկի մերձակայքում):

Ս. Հարությունյանն ասաց, որ AREAL-ի շահագործման բոլոր նախապատրաստական աշխատանքներն ավարտված են՝ շենքը պատրաստ է, ստացվել են սարքավորումների 95%-ը (դրանց մեծ մասը նվիրատվություն է):

«Քենդլ» նախագծի ղեկավար Վասիլի Ցականովն ասաց, որ AREAL-ը, հանդիսանալով սինքրոտրոնային լույսի աղբյուր, ունի կիրառելիության շատ մեծ սպեկտր: Աշխարհում մեծ պահանջարկ կա նման արագացուցիչների նկատմամբ, սակայն դրանք հիմնականում տեղակայված են զարգացած երկրներում: Բավական է ասել, որ ոչ Մերձավոր Արեւելքում, ոչ Արեւելյան Եվրոպայում, ոչ մեր հարեւան երկրներում նման գիտական կենտրոն գոյություն չունի եւ առաջիկայում չի լինի: Արագացուցչի շնորհիվ Հայաստանը կդառնա տարածաշրջանում գիտական առաջատար կենտրոնը: Սինքրոտրոնային լույսը կարելու է նշանակություն ունի ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, բժշկության, շրջակա միջավայրի, նյութագիտության, դեղագործության, նանոէլեկտրոնիկայի եւ միկրոարտադրության բնագավառներում: Բավական է ասել, որ վերջին տասնամյակում նոր դեղերի 60%-ն աշխարհում մշակվել է արագացուցչի օգնությամբ:

## «ՔԵՆԴԼ» նախագծի առաջին արագացուցիչը կշահագործվի գալիք մայիսին



«ՔԵՆԴԼ» նախագծի առաջին փուլի՝ AREAL լազերային գիտահետազոտական գծային արագացուցիչ կառուցումը կավարտվի 2013 թվականի մայիսին: AREAL-ը հնարավորություն կտա ստանալ փոքր էմիտանսով էլեկտրոնային փնջի գերկարճ իմպուլսներ, ինչը ժամանակակալից փնջերի ֆիզիկայի և արագացուցչային տեխնիկայի հեռանկարային բնագավառներից է և գերակա ուղղություն է աշխարհի շատ առաջատար կենտրոնների համար: Այս մասին լրագրողների հետ հանդիպման ժամանակ տեղեկացրեց ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը: ««ՔԵՆԴԼ» ծրագիրն իրենից ներկայացնում է 3-րդ սերնդի արագացուցչային-կուտակիչ համալիրի վրա հիմնված լույսային ճառագայթման աղբյուր: Այս նախագիծը հնարավորություն կտա ժամանակակալից գիտական հետազոտություններ կատարել հիմնարար և կիրառական ուսումնասիրությունների ողջ տիրույթում՝ ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, բժշկության, շրջակա միջավայրի, նյութագիտության, դեղագործության, նանոէլեկտրոնիկայի և միկրոարտադրության բնագավառներում», - ներկայացրեց Սամվել Հարությունյանը:

«Արմենպրես»-ի փոխանցմամբ՝ Գիտական կոմիտեի և «ՔԵՆԴԼ» նախագիծն իրականացնող իմբի ջանքերով 2010-2012 թվականների ընթացքում նախագծի վերաբերյալ պաշտոնական բանակցություններ են կայացել և համագործակցության հուշագիր է կնքվել Չինաստանի Շանհայի կիրառական ֆիզիկայի ինստիտուտի հետ, Ֆրանսիայի Էներգետիկայի դեպարտամենտի, «Կոնրչատովի ինստիտուտ» ռուսաստանյան ազգային գիտահետազոտական կենտրոնի հետ և այլն: «Բազմաթիվ երիտասարդներ, ծրագրի շրջանակներում, գործուղվել են Ճապոնիա և այլ երկրներ վերապատրասվելու, և այսօր մենք Հայաստանում ունենք այս ոլորտում աշխատող լավագույն մասնագետները: Շինարարական աշխատանքներն արդեն ավարտված են, սարքավորումների մեծ մասը Երևանում են և փորձնական փուլում», - ասաց Հովհաննիսյանը:

«ՔԵՆԴԼ» նախագծի ղեկավար Վասիլի Ցականովը նշեց, որ «ՔԵՆԴԼ» սինքրոտրոնային լույսի աղբյուր ստեղծելու ծրագիրը ռազմավարական մեծ նշանակություն ունի: «Ունենալով արագացուցիչ՝ Հայաստանը տարածաշրջանում կդառնա գիտության ոլորտում առաջատար երկիր, կապահովի իր ծանրակշիռ տեղը և ամուր հիմքերի վրա կդնի գիտատեխնիկական համագործակցությունը զարգացած երկրների հետ: AREAL-ը կարևոր գիտական և կիրառական նշանակություն է ունենալու ֆիզիկայի, կենսաբանության, քիմիայի և նյութագիտության բնագավառների առաջատար փորձնական հետազոտությունների համար: Այս նախագիծն իրագործվում է Գերմանիայի DESY ու Շվեյցարիայի PSI արագացուցչային կենտրոնների հետ սերտ համագործակցությամբ, որոնք փորձագիտական աջակցությունից բացի անհատույց կտրամադրեն բացառիկ ժամանակակալից սարքավորումներ», - տեղեկացրեց Վասիլի Ցականովը:

Արագացուցչային համալիրներ կան ԱՄՆ-ում, Եվրոպայում և Ճապոնիայում:



**Հայաստանում սինքրոտրոնային լույսի աղբյուր ստեղծելու նախագիծը կյանքի կոչելու համար ստեղծվել է «Քենդլ» ինստիտուտը**

Նոյեմբերի 30-ին «Փաստարկ» ակումբում տեղի ունեցավ ասուլիս «Հայաստանում «Քենդլ» նախագծի իրականացման ընթացքը. ներկան եւ զարգացման հեռանկարները» թեմայով: Բանախոսներն էին ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը եւ «Քենդլ» նախագծի ղեկավար Վասիլի Ցականովը:

Կոմիտեի նախագահը նախ անդրադարձավ «Քենդլ» նախագծին առնչվող իրավական ակտերին: Նա նշեց, որ Հայաստանում սինքրոտրոնային լույսի աղբյուր ստեղծելու ծրագիրը կազմվել է 2002 թ., նախագիծը կյանքի կոչելու համար 2006 թ. ստեղծվել է «Քենդլ» ինստիտուտը: 2008 թ. դեկտեմբերի 4-ին ընդունվել է «Հայաստանում «ՔԵՆԴԼ» 3 գել էներգիայով 3-րդ սերնդի սինքրոտրոնային լույսի աղբյուր ստեղծելու մասին» ՀՀ կառավարության որոշումը, որով «ՔԵՆԴԼ»-ին տրվել է գիտության և առաջատար տեխնոլոգիաների ոլորտում ռազմավարական ազգային գերակայության կարգավիճակ: 2010 թ. մայիսի 6-ին ընդունված «Մինքրոտրոնային ճառագայթման արագացուցիչ հենքի վրա «ՔԵՆԴԼ» միջազգային կենտրոնի նախագծի իրականացման միջոցառումների և պատասխանատու նշանակելու մասին» ՀՀ կառավարության որոշմամբ նախագծի իրականացման պատասխանատու է սահմանվել ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեն, հաստատվել է «ՔԵՆԴԼ» նախագծի արժեքի 25 տոկոսի սահմաններում ՀՀ կառավարության ֆինանսական մասնակցություն ունենալու պատրաստակամությունը եւ Գիտության պետական կոմիտեին լիազորվել է բանակցություններ վարել և հրավիրել օտարերկրյա պետություններին ու միջազգային կառույցներին՝ մասնակցելու «Քենդլ» միջազգային կենտրոնի կառուցմանն ու օգտագործմանը: 2012 թ. մայիսի 24-ին ընդունված ՀՀ կառավարության որոշմամբ հիմնադրվել է «ՔԵՆԴԼ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամ, հաստատվել է հիմնադրամի կանոնադրությունը, ՀՀ անունից հանդես եկող պետական կառավարման լիազոր մարմին է սահմանվել ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեն:

Բանախոսներն իրենց խոսքում մեծ տեղ հատկացրին Հայաստանի համար «Քենդլ» ծրագրի ռազմավարական նշանակությանը. արագացուցիչ ունենալով՝ Հայաստանը տարածաշրջանում, ուր 2000 կմ շառավղով այսպիսի կառույց չկա, գիտության ոլորտում կդառնա առաջատար երկիր եւ կապահովի իր ծանրակշիռ տեղը, ինչպես նաեւ կհայտնվի այն սակավաթիվ երկրների շարքում, որոնք միաժամանակ աստմակայան եւ արագացուցիչ ունեն: «Քենդլ» ինստիտուտի բազայի վրա նպատակահարմար է ստեղծել հետազոտական համալսարան, իսկ ծրագիրն ընդհանուր առմամբ կնպաստի արտերկրի հայ գիտնականների համագործակցության զարգացմանը:

ԳՊԿ-ն բանակցություններ վարելու եւ ծրագրի իրականացման համար գործընկերներ գտնելու նպատակով 2010-2012 թթ. ընթացքում նախագծի վերաբերյալ պաշտոնական բանակցություններ է վարել եւ համագործակցության հուշագրեր կնքել Ֆրանսիայի Էներգետիկայի դեպարտամենտի, Գերմանիայի DESY արագացուցչային կենտրոնի, Շվեյցարիայի PSI ազգային արագացուցչային կենտրոնի, «Կուրչատովի ինստիտուտ» ռուսաստանյան ազգային գիտահետազոտական կենտրոնի, Իտալիայի ELETTRA արագացուցչային կենտրոնի եւ Շանհայի կիրառական ֆիզիկայի ինստիտուտի (SINAP) հետ:

Նշված բոլոր կենտրոններն էլ մեծ հետաքրքրություն են ցուցաբերել «ՔԵՆՂ» նախագծի վերաբերյալ, ինչպես կառույցի ստեղծման, այնպես էլ փորձարարական ծրագրի փուլերում, եւ պատրաստակամություն են հայտնել ներդրումներ կատարել ծրագրի իրականացման գործում թե՛ ֆինանսական միջոցների, թե՛ սարքերի եւ սարքավորումների տեսքով:

«Քենդլ» նախագծի ղեկավար Վասիլի Ցականովը, համապատասխան տեսանյութեր եւ լուսանկարներ ներկայացնելով, լրագրողներին պատմեց «Քենդլ» նախագծի մասին՝ հատկապես անդրադառնալով նախագծի առաջին փուլի՝ AREAL (Advanced Research Electron Accelerator Laboratory) լազերային գծային արագացուցչի կառուցման աշխատանքներին, որոնք սկսվել են 2011 թ.:

Վ. Ցականովը նշեց, որ AREAL-ը հնարավորություն կտա ստանալ փոքր էմիտանսով էլեկտրոնային փնջի գերկարճ իմպուլսներ, ինչը ժամանակակից փնջերի ֆիզիկայի եւ արա-գա-ցուցչային տեխնիկայի հեռանկարային բնագավառներից է եւ գերակա ուղղություն է աշխարհի շատ առաջատար կենտրոնների համար: Այն կարելու գիտական եւ կիրառական նշանակություն կունենա ֆիզիկայի, կենսաբանության, քիմիայի եւ նյութագիտության բնագավառների առաջատար փորձարարական հետազոտությունների համար: AREAL նախագիծն իրագործվում է Գերմանիայի DESY ու Շվեյցարիայի PSI արագացուցչային կենտրոնների հետ սերտ համագործակցությամբ, որոնք փորձագիտական աջակցությունից բացի, անհատույց կտրամադրեն բացառիկ ժամանակակից սարքավորումներ:

«Քենդլ» նախագծի ղեկավարի հավաստմամբ, AREAL արագացուցչի կառուցմամբ Հայաստանում կստեղծվի էլեկտրոնային արագացուցիչների եւ դրանց կիրառման ժամանակակից գիտահետա-գոտական փորձարարական լաբորատորիա, միջազգային բարձր մակարդակով մասնագետներ կպատրաստվեն Հայաստանում, կձեւավորվի «Քենդլ» հիմնական արագացուցչի կառուցմանը պատրաստ գիտնական-ների եւ ինժեներների անձնակազմը, կփորձարկվեն «Քենդլ» հիմնական արագացուցչի հիմնական համակարգերի տեխնի-կական լուծումները, կզարգանա միջազգային համագործակցություն:

2012 թ. հունիսին միջազգային փորձագետների կողմից անցկացվել է AREAL լազերային գծային արագացուցչի կառուցման աշխատանքների ընթացքի փորձաքննությունը: Ավարտվել են արագացուցչի գիտատեխնիկական ենթակառուցվածքի տեղակայ-ման հիմնական շինարարական աշխատանքները: Ինստիտուտում ստեղծվել են գերբարձր վակուումային տեխնիկայի եւ գերբարձր ռադիոհաճախության գեներատորների ժամանակակից լաբորատորիաները: Ներկայումս կառուցվում է փորձարարական սրահը եւ ամբողջական ծավալներով ընթանում են փորձարարական աշխատանքները: AREAL նախագծի աշխատանքներում ակտիվորեն ներգրավված են Երեւանի պետական համալսարանի եւ Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի շնորհալի երիտասարդ շրջանավարտները:

AREAL-ի վերջնական շահագործումը ծրագրված է 2013 թ. մայիսին: Իսկ բուն կենտրոնի շինարարության աշխատանքները նախատեսվում է սկսել 2013 թվականի վերջին՝ կառավարության կողմից համապատասխան հողհատկացումից հետո:

Ասուլիսի վերջում Ս. Հարությունյանն ու Վ. Ցականովը պատասխանեցին լրագրողների հարցերին:

ՀՀ ԿԳՆ ԳՊԿ տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժին